ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/178

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Երքաղլույս» ՓԲԸ
Մասնակից՝ «Մարիա Լայթինգ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցում, տնտեսական ապրանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-19/3-1»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.10.2019թ.-ի թիվ 26/26-1/17105-2019 գրությամբ «Մարիա Լայթինգ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երքաղլույս» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 15.10.2019թ.-ի թիվ 1149 գրության հիման վրա, 17.10.2019թ.-ին «Մարիա Լայթինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 17.10.2019թ.-ին, իսկ 18.10.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ ու 24.10.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 24.10.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.10.2019թ.-ին:

2. «Երքաղլույս» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Երքաղլույս» ՓԲԸ-ն 30.09.2019թ.-ի գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«2019թ.-ի սեպտեմբերի 24-ին, պայմանագրով ստանձնած պարտավորությունները 22-րդ չափաբաժնի մասով չկատարելու հիմքով «Երբաղոլյս» ՓԲԸ-ն միակողմանիորեն հրաժարվել է «Երքաղլույս» ՓԲԸ-ի և «Մարիա Լայթինգ» ՍՊԸ-ի (հասցեն՝ ք. Երևան Չարենցի 54, ՀՎՀՀ 01556338, էլ. փոստ maria-laigthing@mail.ru) 2019 թվականի մարտի 6-ին կնքված Ապրանքների մատակարարման N «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-19/3»-1 պայմանագրից համարելով այն լուծված:

«Երքաղլույս» ՓԲԸ-ն պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Խնդրում եմ նախաձեռնել համապատասխան ընթացակարգ «Մարիա Լայթինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, «Երքաղլույս» ՓԲԸ-ն 15.10.2019թ.-ի թիվ 1149 գրությամբ ներկայացրել է «Մարիա Լայթինգ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Մարիա Լայթինգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 07.10.2019թ.-ին գրությամբ դիմել է «Մարիա Լայթինգ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.10.2019թ.-ի թիվ 26/26-1/17105-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև հրավիրված նիստին:

4. <u>ՍՑ-LO-2019/178 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Երքաղլույս» ՓԲԸ-ի և «Մարիա Լայթինգ» ՍՊԸ-ի միջև 06.03.2019թ.-ին կնքվել է թիվ «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-19/3/-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է ապրանքների մատակարարման ժամկետները, ծավալները և հասցեն:

www.gnumner.am համացանցային կայքում 26.09.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ *«Երքաղլույս» ՓԲԸ-ի և «Մարիա Լայթինգ» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի մարտի 6-ին կնքված թիվ «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-*

19/3»-1 ծածկագրով պպրանքների մատակարարման գնման պայմանագրի 1.1 կետով սահմանված /թիվ 1 հավելված/ ժամկետում և տեխնիկական բնութագրին համաձայն, մասնավորապես 22-րդ չափաբաժնով նախատեսված՝ Մատակարարը պարտավոր էր մատակարարել «Լուսատու ԺԿՈՒ 150» ապրանքատեսակը, այն է՝ մատակարարումն իրականացնել հայտը տալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, սակայն ուշացումով է մատակարարվել հիշյալ ապրանքը, ինչպես նաև մատակարարված ապրանքները չեն համապատասխանել Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին:

2019 թվականի սեպտեմբերի 13-ին, «Երքաղլույս» ՓԲԸ-ն էլեկտրոնային փոստի միջոցով Մատակարարին ծանուցել է, որպեսզի Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարվեն պատշաճ և ժամանակին, այն է՝ մատակարարված ապրանքները փոխարինվեն և մատակարարվի համապատասխան ապրանք:

«Երքաղլույս» ՓԲԸ-ի 2019 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 68 / 1000 գրությամբ Մատակարարը զգուշացվել է, որ Պայմանագրով սպանձնած 22-րդ չափաբաժնի մասով պարտավորությունները չկատարելու դեպքում, Պատվիրատուն նշված չափաբաժնի մասով միակողմանի հրաժարվելու է հիշյալ Պայմանագրից:

Հիշեցնում եմ նաև, որ Պայմանագրով սահմանված ժամկետում 22-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքները Ձեր կողմից չեն փոխարինվել և ժամկետում չեն մատակարարվել, հետևաբար խախտվել է Պայմանագրով սահմանված էական պայմանները, ուստի.

ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345 հոդվածի 1-ին մասով, 466 հոդվածի 3-րդ մասով, Պայմանագրի 2.1.7 կետով և 2.1.7.1 կետի «ա» և «բ» ենթակետերով, 22-րդ չափաբաժնի մասով «Երքաղլույս» ՓԲԸ-ն միակողմանի հրաժարվում է Մատակարարի հետ կնքված N «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-19/3»-1 պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և,

պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Մատակարարը պարտավոր է ողջամիտ ժամկետում վճարել 22 չափաբաժնի մասով Պայմանագրի կատարման ապահովումը, այն է 54.500 «դրամ և Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով սահմանված, որպես տույժ 572 «դրամ և

տուգանք՝ 818 «դրամ, որը հաշվակցվելու է Պատվիրատուի և Մատակարարի միջև առկա պայմանագրային գումարից:

Տեղեկացնում եմ նաև, որ Պայմանագրի 2.1.6 կետի համաձայն, «Երքաղլույս» ՓԲԸ-ն պահանջելու է հատուցել այն վնասները, որը կարող է առաջանալ Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով ապրանք ձեռք բերելու ժամանակ՝ Պայմանագրով սահմանված գնի համեմատ առաջացող դրական տարբերության մասով:»

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.10.2019թ.-ի թիվ 26/26-1/17105-2019 գրությամբ «Մարիա Լայթինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի

բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝

Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 7 օրից ավելի,

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

«Երքաղլույս» ՓԲԸ-ի և «Մարիա Լայթինգ» ՍՊԸ-ի միջև 06.03.2019թ.-ին կնքվել է թիվ «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-19/3/-1» ծածկագրով պետական գնման Պայմանագրի հավելված 1-ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է ապրանքների մատակարարման ժամկետները, ծավալները և հասցեն:

www.gnumner.am համացանցային կայքում 26.09.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Երքաղլույս» ՓԲԸ-ի և «Մարիա Լայթինգ» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի մարտի 6-ին կնքված թիվ «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-19/3»-1 ծածկագրով պպրանքների մատակարարման գնման պայմանագրի 1.1 կետով սահմանված թիվ 1 հավելվածի նախատեսված ժամկետի և տեխնիկական բնութագրի համաձայն, 22-րդ չափաբաժնով նախատեսված՝ «Լուսատու ԺԿՈՒ 150» ապրանքատեսակը Մատակարարը պարտավոր էր մատակարարել, հայտը տալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, սակայն ուշացումով է մատակարարվել հիշյալ ապրանքը, ինչպես նաև մատակարարված ապրանքը չի համապատասխանել Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին:

2019 թվականի սեպտեմբերի 13-ին, «Երքաղլույս» ՓԲԸ-ն էլեկտրոնային փոստի միջոցով Մատակարարին ծանուցել է, որպեսզի Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարվեն պատշաճ և ժամանակին, այն է՝ մատակարարված ապրանքները փոխարինվեն և մատակարարվի համապատասխան ապրանք:

«Երքաղլույս» ՓԲԸ-ի 2019 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 68 / 1000 գրությամբ Մատակարարը զգուշացվել է, որ Պայմանագրով ստանձնած 22-րդ չափաբաժնի մասով պարտավորությունները չկատարելու դեպքում, Պատվիրատուն նշված չափաբաժնի մասով միակողմանի հրաժարվելու է հիշյալ Պայմանագրից:

Սակայն ապրանքները Մատակարարի կողմից չեն փոխարինվել և ժամկետում չեն մատակարարվել, հետևաբար խախտվել է Պայմանագրով սահմանված էական պայմանները, ուստի ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345 հոդվածի 1-ին մասով, 466 հոդվածի 3-րդ մասով, Պայմանագրի 2.1.7 կետով և 2.1.7.1 կետի «ա» և «բ» ենթակետերով, 22-րդ չափաբաժնի մասով «Երքաղլույս» ՓԲԸ-ն միակողմանի հրաժարվել է Մատակարարի հետ կնքված N «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-19/3»-1 պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն

որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ թիվ «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-19/3-1» ծածկագրով գնման Պայմանագրով սահմանված ժամկետում Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված՝ 22-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը Մասնակցի կողմից չի փոխարինվել և սահմանված ժամկետում չի մատակարարվել, որի արդյունքում խախտվել են Պայմանագրի էական պայմանները:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Մարիա Լայթինգ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանիորեն 24.09.2019թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 26.09.2019թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում' նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մարիա Լայթինգ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով

նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.10.2019թ.-ի թիվ 26/26-1/17105-2019 գրությամբ «Մարիա Լայթինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/178 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Մարիա Լայթինգ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**